ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

20-ը մայիսի 2019թ.
ժամը 12^{00}

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կոմունալ-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ռիսայանը,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կոմունալ-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Է. Համբարձումյանը,

ՀՀ ԶՈւ ԳՇ ռազմանվագախմբային բաժնի պետ-գլխավոր զինվորական դիրիժոր, գնդապետ Ա. Պողոսյանը,

ՀՀ ԶՈւ ԳՇ ռազմանվագախմբային բաժնի պետի տեղակալ, մայոր Տ. Ասատրյանը.

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ Մ. Հոխեյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ. Հոխեյան)

1. 1-ին տեղերը զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. 1-ին տեղերը զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Մ. Հոխեյան)

1.1 ***ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 4-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն 1-ին տեղերը զբաղեցրած մասնակիցներ «Տե[illegible]կենտրոն» ՍՊԸ-ն և «Հաշգա» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն: Ընթացակարգի հրավերի համաձայն Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով չի գնահատվել:***

1.2 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին 1-ին տեղերը զբաղեցրած մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ ներքոհիշյալ դեպքի.

- «Տեսակենտրոն» ՍՊԸ կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում /հավելված N 6.1/՝ տեխնիկական բնութագրեր սյունակում «Գալարափող «F/Bb»» չափաբաժնի մասով՝ փողի անցքի շառավղի նշված չափը՝ 11,80 մմ չի համապատասխանում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված փողի անցքի շառավղի չափին /11,89 մմ/:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարը գնահատող հանձնաժողովի որոշմամբ արձանագրված անհամապատասխանության մասին www.armeps.am կայքի ոչ ավտոմատ ծանուցումով տեղեկացրեց «Տեսակենտրոն» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունը: «Տեսակենտրոն» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում որպես անհամապատասխանության շտկում ներկայացրեց գրություն հետևյալի մասին.

Ի պատասխան Ձեր՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում ներկայացված շտկման պահանջի, հայտնում եմ Ձեզ, որ մեր կողմից ներկայացված տեխնիկական բնութագրով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում /հավելված N 6.1/՝ տեխնիկական բնութագրեր սյունակում «Գալարափող «F/Bb»» չափաբաժնի մասով՝ փողի անցքի շառավղի նշված չափը՝ 11,80 մմ չի նարող որակական ազդեցություն ունենա գործիքի հնչեղության վրա: Վերոնշյալ գրությունը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով գնանշման հարցման քարտուղարի կողմից տրամադրվեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին:

Հանձնաժողովի հաջորդ նիստում, որը տեղի ունեցավ 20.05.2019թ.-ին՝ քննարկվեց «Տեսակենտրոն» ՍՊԸ կողմից /13.05.2019թ./ ներկայացված գրությունը և պատասխանատու ստորաբաժանման կողմից /17.05.2019թ./ ներկայացված մասնագիտական եզրակացությունը /«Տեսակենտրոն» ՍՊԸ կողմից առաջարկվող ապրանքները /1-ին և 4-րդ չափաբաժինների մասով/ և «Հաշգա» ՍՊԸ կողմից առաջարկվող ապրանքները /2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով/ համարվում են համարժեք և որոշեց «Տեսակենտրոն» ՍՊԸ և «Հաշգա» ՍՊԸ կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը գնահատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան:

1.3 20.05.2019թ.՝հիմք ընդունելով վերոնշյալը և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Տեսակենտրոն» ՍՊԸ և «Հաշգա» ՍՊԸ կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված (հաղթող) մասնակիցներ՝ «Տեսակենտրոն» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին և 4-րդ, իսկ «Հաշգա» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով ընթացակարգի՝ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով և անգործության ժամկետի ավարտից հետո սահմանված կարգով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.4 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ. Հոխեյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 12:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Գ. Ոսկյան
Գնահատող	Է. Համբարձումյան
Գնահատող	Ա. Պողոսյան
Գնահատող	Տ. Ասատրյան
Գնումները համակարգող՝	Մ. Հոխեյան